Բ.

Թովման Արարատեան երկրից վերադառնում է Մեծոփայ վանքը. «և կամանդ կացեալ, բազում ջանիւ և առաքինութեամբ. Լե ամ դաս ասելով ամենայն գրոց աշակերտելոց. և բազում յորդիս ի փառս ածելով և է աշակերտի գաւազան տուեալ»*: Այս խօսքերը մեզ համար կարևոր նշանակութիւն ունին Թովմայի կեանքի տևողութիւնն ու ժամանակագրութիւնը կարգաւորելու. վաթսուն տարի է տևել Թովմայի կեանքը Մեծոփայ վանքը ոտք կոխելու օրից սկսած և 35 տարի բուն վարդապետական գործունէութիւնն այդ վանքում: Եւ յիրաւի ՊԾԹ թուից, երբ նա վարդապետական գաւազան և իրաւունք ստացաւ դաս ասելու, մինչև ՊՂԵ, նորա մահուան տարին, ուղիղ 35 տարի է անում: Մակաբերելով մեր քննութիւնը Թովմայի Սուհարայի և մանկութեան ուսման շրջանների մասին, Մեծոփ մտնելը պէտք է նշանակենք 1386 թուին և ծնունդը 1376—1379 թուերին:

Բացի Կիրակոսի վերոյիշեալ խօսքերից՝ Թովմայի վարդապետական-վարժապետական գործունէութեան մասին թանձրացեալ և ընդարձակ նկարագրութիւն չունինք: Բայց բազմաթիւ են, թէև ոչ լրիւ հաւաքուած, այն յիշատակարանները, որոնց գրիչները իբրև ժամանակակից կամ Թովմայի աշակերտ պատկառանքով են խօսում նորա կեանքի սրբութեան և վարժապետական հռչակի մասին: Նորա աշակերտների մասին կցկտուր տեղեկութիւններ ունինք նաև իւր իսկ յիշատակարանների մէջ: Թովման ժամանակակիցների աչքում ոչ միայն ընտիր գրիչ էր, որի ձեռքով գրուած ձեռագիրներ ունինք Մ. Աթոռի մատենադարանում և ուրիշ տեղեր, այլ և գրչութեան արուեստի նշանաւոր ուսուցիչ: Կիրակոսի խօսքերի համեմատ «ուսոյց ԻԴ ընտիր գրագիր»**, որոնցից մի քանիսը ապագայում նշանաւոր հանդիսացան:

Թովմային աշակերտած եօթ վարդապետներից և 24 ընտիր գրիչներից միայն մի քանիսի անունը գիտենք: Դոցա մէջ իւր աստիճանով առաջին տեղն է բռնում Արճիշու և Մեծոփայ վանից Յովհաննէս եպիսկոպոսը, որին Թովման ՊՁԴ (=1435) թուի յի-

---

* Նոր Նիւթեր· 744/5· (7/8):

** Նոր Նիւթեր· Ար· 742· (5):